**164. Տպ. «Շանթ»,** Ղալաթիա, Ճամի Գափուսը, թիւ 9, հիմնուած 1 Փետր. 1909 ին ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆի [կենսագրութիւնը տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը» 1911,] կողմէ, ԵԱԶԸՃԵԱՆ ՆՈՒՊԱՐի հետ ընկերովի: — ՇԱՆԹ «Շէնգալ» պատկերազարդ տաճկերէն հանդէսին տպագրութեան ձեռնարկած է՝ Մատթէոսեանէ վերջ, իսկ 15 Յունիս 1911 էն սկսեալ լոյս ընծայած **Շանթ** կիսամսեայ շքեղ հանդէսը (գրական և գեղարուեստական) որ ցարդ կը շարունակուի: — Այս տպարանը որ յետ Սահմանադրութեան բացուողներուն մէջէն մին է սակաւաթիւ լաւ կազմակերպուածներէն — ճաշակաւոր ու մաքուր գործ արտադրելու տեսակէտով, — անցեալ տարի այրած և կարճ դադարէ մը վերջ վերաբացուած է՝ ցարդ հրապարակ ածելով հետեւեալները. — **Մեր Տարեցոյցը** (1910-2), Կեանքին մէջ (Եր. Սրմաքէշխանլեան), Շիրվանզատէ (Գ. Մալխաս), Զանազան թարգմանութիւնք (Մ. Աճէմեան), Մանուկներու առողջապահութիւնը, Հայ-Գիւղի քարահանք, Ակեոխա, Ապուշներու տարեցոյցը (Ե. Օտեան), Վիպակներ, Մարմնամարզ եւայլն եւայլն: — Գրաշարապետ՝ Ենովք Գարամաճեան:



Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

**165. Տպ. «Արաքս»,** ը հիմնած է Ասոմ Շահէն (= Երիցեան), ծնած է Ակն՝ 1875 Մարտին. աշակերտած Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանի. Լայբցիկ, Եէնա և Բարիզ՝ համալսարանական ուսանող: — Իր տպարանը նախ Բերա՝ Եէնի Չարշի, թիւ 52 էր՝ ուր սկսաւ հրատարակուիլ 10 Յունիս 1909 ին **Ազատամարտ** օրաթերթը (որուն տպագրութենէն ապա առանձնեց Հ. Թիրեաքեան), և ուրկէ փոխադրուեցաւ Պօլիս, Պապը Ալի, Էպուսուտ փողոց: — Բաց ի օտար լեզուէ բազմաթիւ գիրքերէ, հայերէն տպածներն են. — **Մեղրագետ** (Ռուբէն Զարդարեան), **Լուսաբերներու** շարքը, Արուլալա (Ա. Խաչհակեան), Պարտուածներ, Արձակ երգեր (Մաննիկ Պէրպէրեան), Բիւրղօ-Հայ պատմութիւն, Բիւթանիա, Վերժին (Շանթ), Հին Աստուածներ (Շանթ), ևն. ևն.:



ԱՏՈՄ ՇԱՀԷՆ



Մ. ՌԷՍԻՄՃԻ

**166. Տպ. «Գասէր»,** Մօլա Թաշ, թիւ 16, հիմնուած 1909 Փետրվարին ՄԵՍՐՈՊ ՌԷՍԻՄՃԻի կողմէ՝ ԱԲԻԿ ՎԱՆԼԵԱՆի հետ ընկերովի: — Մեսրոպ ծնած է 1870 ին Բերա: Հայ հռոմէական: Աշխատակցած է **Սրամպուլ**ի և հինուց ի վեր տպարաններու և խմբագրատանց մէջ անցուցած իր կեանքը: Ամիսի մը չափ ալ հրատարակած է **Գասէր** տաճկերէն թերթը՝ 1911 ին կառավարութեան կողմէ դադրեցուցուած: — «Գասէր»